

## ԳՈՒՆԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆՆԵՐՈՒՄ

Արշակ Չոպանյանը, 1940թ. հրատարակելով հայրենները, ժողովածուն անվանեց «Հայրեններու բուրաստանը»: Հայրենները, որոնք կենսասեր մարդու աշխարհիկ ոգու արտահայտություններն են, բերում են գույնի ու բույրի զգացողություն, որովհետև այդպիսին է սիրահարված մարդու, հայ մարդու աշխարհընկալումը, և ժամանակը անգոր է այս պատկերամտածողության դեմ.

*Կարմիր՝ ի սպիտակ երես,  
Սիրու տէր արիր գիս ի քեզ.  
Ծոցիկդ ի պաղչի նման,  
Գոյնզգոյն վարդեր կայ ի ներս.  
Ծոցուդ ես հաւաս ունիմ,  
Գամ, մտնում ի պաղչան ի ներս.  
Քաղեմ գոյնզգոյն ծաղկունք,  
Խնծորով մտնեմ դէպ ի քեզ.<sup>1</sup>  
ԱԺԸ, 1-8:*

Աշխարհը՝ վարդ, ծաղիկ ու գույն, «պաղչա», որովհետև սիրահարված մարդու համար նույնանում են աշխարհն ու յարի ծոցը:

Հայրենների մասին Պարույր Սևակը գրել է, որ այնտեղ միայն դժբախտ կամ տանջալից սիրո տաղասաց չենք տեսնում, այնտեղ նաև քաղցր սերն է: «Եվ ամենից առաջ այդ քաղցրությունն է հենց, որ իր ավիշով ու հյութով օժեղ ու ցողել է հայրենների բուրաստանը, ծովացել քուչակյան պարտեզներում: Մ. Աբեղյանի դիպուկ խոսքով ասած՝ «կարծես դրանով մեր բանաստեղծությունը վրեժ է առնում դարավոր ողբերից»:

<sup>1</sup> «Հայրեններ», Աշխատասիրությամբ Ա. Ծ. Մնացականյանի, Երևան, 1995, էջ 94: Այնուհետ կնշվի միայն շարքի և տողի համարը:

Ծառն ու ծաղիկը, պարտեզն ու այգին, կանաչն ու լուրթը, փարչն ու գինին են ստեղծում այն մթնոլորտը, որտեղ գաղտնի ու բացահայտ, թռուցիկ ու մինչև աքլորականչ, սիրով ու կարոտով հանդիպում են իրար «խոշ ու խորոտիկ» յարերը: Ինչքան գույներ, որքան բույրեր կան այդ լեռնաշխարհում, նույնքան երանգներ ու տրամադրություններ ունինրանց սերը»<sup>1</sup>:

Ճիշտ է, Սևակը խոսում է հայրեններում սիրո տարբեր դրսևորումների մասին, բայց անուղղակիորեն մատնանշում է նրանցում ծովացած բույրերն ու գույները՝ այնքան բնորոշ Հայկական լեռնաշխարհին:

Հայրեններից մեկում ժողովրդական մտածողությանը բնորոշ խորությամբ բանաձևվում է սիրո էությունը:

*Յայտ լեռնէդ ի վայր գայի,  
Կանչեցի, թե՛ «Յո՛ր կա կանանչ»:  
Մէկիկ մ'այլ ինձ գայն ասաց.  
Սար ու ձոր ամէնն է կանանչ.  
Ով որ սրտով սէր ունի՝  
Իր սրտին երակն է կանանչ.  
Ով որ սրտով սէր չունի՝  
Սիրտն է սև, երեսն է կանանչ.  
ԱՄԹ, 113-120:*

Պատահական հանդիպում, հարց ու պատասխան, և իբրև պատկեր ցուանում է բնության համատարած կանաչը: Երրորդ, չորրորդ տողերը ընթերցողի առաջ հոգեբանական շերտեր են բացում: Կանաչը սիրո զգացումով համակված մարդու համար ուրախության, կյանքի, կենսասիրության խորհրդանիշ է: «Սրտով սէր» ունեցող մարդու հոգու խաղաղությունը ներդաշնակ է բնության զարթոնքին.

*Իմ եարին մտիկ արեք,  
Ձինչ հագեր՝ ամէնն է կանանչ.  
Եարել մարգարտէ օղկիկ  
՛Ի ամենին կոճակն էր կանանչ.  
Առաւ ի պահժան մտաւ,  
Ջուր կերթար, եզերն էր կանանչ.  
Բացել գոյնզգոյն ծաղիկ,  
՛Ի ամենին տերևն էր կանանչ.  
ԱՄԹ, 121-128:*

<sup>1</sup> Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1974, էջ 34-35:

Տպավորիչ է կանաչով եզերված կարկաչող ջրի ու կանաչ տերևներով գույնզգույն ծաղիկների պայծառ բնանկարը: Բայց շնչող, ապրող բնանկարը զուգահեռվում է սիրո հարուցած մաքուր զգացմունքին: Գույնը դառնում է մարդկային մտքի ու զգացմունքի արտահայտություն: Ինչպես նկատում է Դավիթ Գասպարյանը, լույսի ու գույնի խորհրդանշանները հայրեններում սիրո մի փակ աշխարհ են բացում<sup>1</sup>:

Կանաչը մաքուր, արթնացող սերն է, որ բերում է հոգու թրթիմներ, ցնծություն, ներքին խնդություն: Այն գարնան՝ արյունը խլրտացնող ջերմության խորհրդանիշն է: Ահա թե ինչու, երբ հեռանում է սիրած էակը, կանաչի փոխարեն ձյունը, եղյամը, ցուրտն ու սառնությունն են պատում շուրջն ու հոգին.

*Երբ որ դու ինձի էիր՝  
Ծառ կանանչ, տերևն ի վերայ.  
Գնացիր ու այլոց եղար՝  
Չուն եկաւ, եղեմն ի վերայ.  
ԱՄԹ, 147-150:*

Հայրեններում երբեմն կանաչի հետ համադրվում է մուգ կապույտը, մանուշակագույնը.

*Կանաչ ու մօռ կու հազնիս,  
Գաս, ի յիմ դիմացըս կանզնիս.  
ԱԳ, 17-18:*

Այս համադրության մեջ իշխում է կանաչը՝ սիրո մաքուր ոլորտը, բայց մոռը նրան զրկում է եթերային նրբերանգից, դարձնում ավելի իրական, ավելի պահանջկոտ: Ասվածի վկայությունն է հետևյալ հայրենը, որում կապույտը ազատ է կանաչի իշխանությունից.

*Մի՛ գար, մի՛ հազնիր կապուտ,  
Մի՛ ծօծար, մի՛ տար թևերուտ.  
Մի՛ գար առջևովս անցնիր,  
Մի՛ կրակ վառել քո հոգուր.  
Ծատ մարդ գէ՛մ վարձք են արեր  
Ու կարմունձ կապեր գետերուր.  
Մէկ վարձք քո գերուտ արայ,  
Առ ի ծոցըդ վանց քո հոգուր.  
ԱՄԹ, 105-112:*

<sup>1</sup> Տե՛ս Դավիթ Գասպարյան, Հայ գրականություն, Գիրք երկրորդ, Երևան, 2002, էջ 514:



Գնում է ուշքը աշնան,  
Երբ նռան կեղևն է բացում...  
Հատիկը՝ կարմիր գատիկ,  
Երեսիդ շողք է տարածում՝:

Երբ անհնար է լինում այլևս իշխել զգացմունքների վրա, հայրենների գունային համակարգում տեր ու տնօրեն է դառնում կարմիրը: Ու այդ դեպքում պատահական չէ անգամ յարին ուղղված «կարմիր ու ձերմակ երես» արտահայտությունը.

Կարմիր ու ձերմակ երես,  
Ամ քանի՞ դուն գիս պիտի երես.  
Քանի որ մէժիս նստիս՝  
Ուներովտ հետ ինձ գրուցես.  
Կոճկերտ այ արձակ այնես  
Ու ձերմակ ծոցտ ցըցընես.  
Կու վախեմ թողուս, ելնես,  
Ու ծոցէտ մահրում մնամ ես.  
Ա/Ա, 111-118:

Կարմիրը լայն կիրառություն ունի իբրև արյան գույնը հատկորոշող բառ: Սակայն հայրենի կառուցվածքում որոշիչը ձեռք է բերել մակդրային իմաստ, որովհետև առաջնայինը ոչ թե արյան բնական գույնը շեշտելն է, այլ գույնի միջոցով համակած զգացմունքը արտահայտելը.

Ամ քանի՞ ու քանի՞ ասեմ,  
Թե աչվիտ ծարուր մի՛ լնույ.  
Ու գայս իմ կարմրուկ արիւնս  
Ատ ձերմակ շլինքդ մի՛ առնույ.  
Ա/ԽԷ, 211-214:

Ծարուրած, սուրմայած աչքերը դառնում են արյան եռքի պատճառ, ու կարմրուկ բառը հենց այդ հոգեվիճակի արտահայտությունն է:

«Քո գունովն ինձ գինի պիտէր, / Խըմէի ու հարբենայի» (Ա/ԿԸ, 297-298),- կանչում է հայրենի հեղինակը:

Սա ավելին է, քան սովորական կարմիրը. սա թողած ազդեցության հետևանք է՝ տանջող, բայց ցանկալի:

Հայրեններում կարմիրը ոչ միայն հոգեբանական ենթատեքստ ունի, այլ նաև գեղեցկության խորհրդանիշ է: Մի հայրենում աղջիկը պատասխանում է տղային, որ Աստված իրեն կարմիր երես է տվել, նրան՝ աչեր, որ կանգնի նայի, իրեն «ըմընտուփին» - գեղեցկություն է տվել, նրան՝ կրակ, որ ինքն իրեն այրի (Ա/Ա, 227-334): Այդ գեղեցկությունն է ընդգծվում նաև հետևյալ տողերում. «Երեստ է կարմիր ու լայն, / Ու վար-

դի տերևի նման (ԱԸ, 35-36)», «Այտ քո պատկերքտ և սուրաթտ / Ի վարդին կարմիր տերևէն» (Ա/ԽԱ, 195-196), «Բացվեր ես ի վարդ նման» (Ա/ԺԶ, 7), «Իմ եարս ալ ի դուրս ելաւ, / Կարմրած գէտ վարդի տերև» (Ա/ԾԱ, 389-390):

Վարդը՝ իբրև գեղեցկության խորհրդանիշ, հենց կարմիրի կրողն է: Վարդ - կարմիրը նաև նոր կենսաընկալում է. պայծառ գույնը հույսերի, երազանքների իրականացման հավաստիք է.

*Աշխարհս է վարդով ի լի,  
Ես ի քեզ ապով կու կենամ.  
Չասես, իմ սիրուն եարիկ,  
Թէ գքո աղէկդ մոռանամ.  
Ա/Ե, 73-76:*

Կանաչի, կարմիրի ու կապույտի հետաքրքիր խաղ է հետևյալ հայերենը, սիրո, կանչի թաքուն խոստովանություն.

*Աղտրին մըտիկ արէք,  
Որ դըրեր կարմիր սարաղում.  
Եկեր, պարոսպին առեր,  
Որ ամէն է աղւընոյ պոտած.  
Ելենեմ ու պաղչան մըտնում  
Ու քաղեմ ծաղիկ մօռ ու լուրջ.  
Առնում իմ եարին տանիս  
Ու պագնիմ գինք խումար ու լուրջ.  
Ա/Կ, 617-624:*

Աղջիկը միտումնավոր է եկել կանգնել: Դա է վկայում նրա կրած «սարաղումը», որ ընտիր կերպասից շինված, ոսկեթել ծուպերով, կանաչ ու կարմիր երիզներով, գույնզգույն դերձաններով ասեղնագործված զարդ է<sup>1</sup>: Հենց այդ սարաղուցն է համարձակություն տալիս տղային՝ նրան մոտենալու, իսկ մուգ ու բաց կապույտ ծաղիկները նրան «խենթ ու լուրջ» համբուրելու թույլտվություն են:

Աղջկան կարմիր և մետաքսե շորերով տեսնելու ցանկությունն էլ միայն նրան գեղեցիկ տեսնելու ցանկություն չէ: Մի հայրենում ասվում է.

*Քանի՛ ու քանի՛ կասեմ.  
Մի՛ կենար դու խամ լաթերով.  
Հագիր դու շարէ շապիք,  
Որ կարած է սուրմէ թելով. Ա/ԾԹ, 81-84:*

<sup>1</sup> Տե՛ս Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Բ, Երևան, 1967, էջ 156:

Եւր շապիկը կամ շալե շապիկը ոսկեթելով ու երկնագույնով նորո-  
րեն ասեղնագործված շապիկն է, որ օժիտ են տվել նորահարսերին: Այն  
նաև կարմիր կտավից շապիկն է, որ կանայք հագել են թանկագին  
զգեստների վրա:

Եւր կապանի հագած աղջկա ծոցը վայելած տղան նորից ու նորից  
այրվում է սիրուց (ԱԵ, 1-12), մեկն էլ տեսել է յարին «բաղնէլվա ու շա-  
րէ շապկով», գրկում է նրան, որ համբուրի, իսկ աղջիկը՝

*Դարձաւ ու ծուղապ ետոր,  
Թէ՛ «Խաղք է՞ր կընիս ցորեկով.  
Ես չեմ ցորեկվան որսիկ,  
Չիս որսա մութն գիշերով.  
Ամէն որս՝ քարով փետով,  
Չիս որսա գիշերն՝ իմ կամով».  
ԱԺ, 23-28:*

Տղային իր տուն հրավիրած աղջիկը նրան գլխի է գցում, որ եղբորն  
ու հորը նման գինի խմեցնի ու հարբեցնի, որպեսզի իրենք կարողանան  
վայելել իրենց սերը, իսկ տղային հմայում է դեղին հումութքով ու շար  
շապիկով.

*Չագնեմ գիմ դեղին շանեմ,  
Չիմ շար շապկեկն ի վերայ.  
Դեղեմ գիմ ծով-ծով աչերն,  
Չիմ կամար ուներն ի վերայ.  
Ի գամ քո դիմացդ կանգնիմ,  
Բո քաղցած աչիմ կշտանայ.  
ԱԺԷ, 19-24:*

Չենվելով բերված օրինակների վրա՝ կարելի է ենթադրել, որ կար-  
միր գույնը ներքին հանաձայնություն է տղայի ու աղջկա միջև, սիրո  
վայելքի կանխակալ խոստովանություն, ճիշտ այնպես, ինչպես խնձորն  
է փոխադարձ զգացմունքների մարմնավորում. «Խնձորով մտնեմ դէպ  
ի քեզ» (ԱԺԸ, 1-8), «Չիւանդ եմ ի քո սիրուդ. / Առ խնձոր, արեկ գիս ի  
տես» (ԱԶԲ, 77-78):

Չոգեկան ապրումների զարգացման յուրօրինակ դրսևորում են  
գունային անցումները: Բլթուլի գովքից վարդը պատռում է կանաչ  
շապիկն ու ծիրանի շոր հագնում.

*Պլպուկն ի յագին մտաւ,  
Ի վերայ վարդին թըռեցաւ.  
Երաց գիւր անուշ լեզուն  
Ու գովեց՝ մինչ որ լուսացաւ*

*Վարդն ալ ի փշին միջին  
Սուտ ի քուն՝ զայն իմացաւ  
Խըզտեց զիւր կանանց շապիքն,  
Ծիրանի շորով մի հագաւ  
ԱԾԴ, 1-8:*

Հայրենի հեղինակը նկարագրում է բնության մի գեղեցիկ պահը, երբ կանաչ «պատյանի» մեջ փակված վարդը բացվում է: Աչքը տեսել է բնության հրաշքն ու որսացել ակնթարթը: Արքայական վեհությամբ օժտված գույնը՝ ծիրանին, մարմնավորում է վարդի գեղեցկությունը: Բայց միևնույն ժամանակ կանաչից դեպի ծիրանի գույնը հագեցած պատում է «վարդի» հոգում տեղի ունեցող փոթորկի մասին, հասունացող զգացմունքների ու ապրումների մասին.

Հայրեններում քիչ հանդիպող ծիրանի գույնը նաև անհուն տառապանքի ու ցավի բարձրակետ է.

*Սարդն, որ սիրու տէր լինի,  
Ու սիրուն ճարակ չի լինի,  
Թող երթայ, փորէ տապան,  
Ու ի ներս մտնոյ կենդանի.  
Դէմ սրտին ծակ մի թողու,  
Որ ելնէ բոցն ծիրանի.  
Որ տեսնու նա զայն ասէ.  
«Սիրու տէր մարդն կու վառի».  
ԱԾԵ, 41-48:*

Բոց մակդիրը հրագույնի երանգներ է հաղորդում ծիրանի գույնին, և պատկերվում է սիրուց «վառվող», տառապող մարդու ցավը:

Հայրենների ներկայանալով առանձնահատուկ նշանակություն ունեն թուփս ու սպիտակ գույները: Սպիտակը ծոցի, երեսի գույնն է, թուփսը՝ աչքերի, մազերի. «կարմիր ու ձերմակ երես» (ԱԼԹ, 9), «սպիտակ ծոց» (ԱԼԹ, 14), «ձերմակ ծոց» (ԱԼԹ, 14), «Աչերտ արծաթէ բրքայ» (ԱԼԳ, 1), «Այ, իմ ձերմակծոց բազա, /ձերմակ ծոցդ ի յիս դառնա» (ԱԺԱ, 85-86), «Ծոցիկդ իսպիտակ տաճար» (ԱՅԵ, 13), «Թուփս աչեր՝ զուգված ծարուրով» (ԱԺԱ, 6), «թուփս ամպեր» (ԱԻԲ, 21-22):

*Թուփս աչք ու թուփս ունք ունիս,  
Թուփս մազեր, կուպակտ ի հոգիս.  
ԱԽԸ, 95-96:*

\*\*\*

«Թուխ աչք 'ւ իմ կամար ուներ,  
խորվեցիր զիս հերկից ի վեր.  
ԱԾՁ, 1- 2:

Երկու հակադիր գույները նույն նշանակությամբ են հանդես գալիս. ընդգծում են աղջկա արտաքին գեղեցկությունը, նաև բերում են հուզական լիցք: Իսկ սև գույնը չարի մարմնավորումն է. «սև աչք» (Ա/ԿԵ, 12), «սև օձ» (Ա/ԻԳ, 33), «սև սապո» (Ա/ԽԴ, 323): Հավակարգել է սևը կիրառվում բառարանային իմաստով, այն էլ՝ «սևուկ» ձևով՝ «սևուկ շապիթ» (ԱԾԴ, 15):

Հայրեններից եկող ծանոթ մտածողությունը կա Վահագն Դավթյանի պոետիկայում.

Հայրենում՝

Իմ եառն այլ ի դուրս ելա,  
Երրորաց, ի պառչյան գնաց.  
Զծեռքն այլ ի ծառն ձգեց,  
Եառերու ճղերն երերաց.  
Էրաց, թէ խնձոր քաղեր,  
Իր ճերմակ ծոցիկն էրեվաց.  
Այնչափ քնքուշ է՝ինք տեսեր,  
Երբ տեսայ՝ նա ուշքս գնաց.  
ԱԾՁ, 46-53:

Վ. Դավթյանի մոտ՝

Բարձրացել էիր ոտներիդ ծայրին,  
Որ խնձոր քաղես...  
Բացվել,  
Ցուլում էր ծնկածալդ թուխ<sup>1</sup>:

Հայրենում՝

Հայ մեր մահալի մորձուկ,  
Մեր աղբիւրն ի ջուրն ես եկեր.  
Լուսինն ի ծոցէտ ի դուրս  
Աղբըրին ի յակն՝ ցաթեր.  
ԱԲ 109-112:

<sup>1</sup> Վահագն Դավթյան, Երկեր երկու հատորով, հատոր առաջին, Երևան, 1985, էջ 275:

#### Վ. Դավթյանի մոտ՝

*Եվ մի թուփս աղջիկ առավոտ լուսին  
Աղբյուր է եկել կավե կուժն ուսին,  
Աղբյուր է եկել,  
Ջրին կռացել  
Ու թուփս ծոցիկն է  
Լուսի դեմ բացել...<sup>1</sup>*

Գույների նույն կենսազգացողությունն է, միայն Վահագն Դավթյանի տողերում սպիտակի փոխարեն մակդրական պատկեր է ստեղծում թուխը՝ հյուսվածքին հաղորդելով տաք ջերմություն:

Հայրեններում քիչ է դեղին գույնի կիրառությունը, բայց այն դրսևորվում է իմաստային տարբեր նշանակություններով: Սեկ հանդես է գալիս ուղիղ իմաստով՝ իբրև գույն. «Երկու ծամ դեղձան ունիս» (Ա/ԽԵ, 139), մեկ դժգույն դեղնագույնն է, որ ավելի է ընդգծվում խնկի ու քրքումի հետ տարվող համեմատություններով (Ա/ԶԲ, 95-98), մեկ պարզապես գեղեցկանալու միջոց է՝ «Դեղեմ գիմ ծով-ծով աչերն» (Ա/ԺԷ, 21), մեկ՝ ֆիզիկական հասունացման խորհրդանիշ:

*Այ իմ նշենի ծաղիկ,  
Դեղնեցար ու դարձար ի նուշ.  
Ա/Ա, 135-136:*

Երբ խորանում են զգացմունքները, փոքր-ինչ սառը դեղինին փոխարինում է ոսկեգույնը, որ տաք ցուլքեր է բերում.

*Շուք ունի գինու նման  
Որ լնուն ի կթխան ու տան.  
Այդ քո ոսկեթել մազիկդ,  
Որ առեր վզիդ մանէման,  
Ա/Գ, 81-84:*

Կթխայի մեջ լցվող գինու նման փայլ ու շքեղություն ունեն աղջկա՝ պարանոցի շուրջը ոլորվող մազերը: Նրա ծոցը «ոսկի սնտուկ է» (Ա/ԿԵ, 123), մեջքին ոսկեթել աղլուփս է կապած (Ա/ԺԱ, 65), նրա սերը ոսկի բևեռ է՝ սրտի մեջ մեխված (Ա/Բ, 100): Աղջիկն իր տուն եկած տղայի առջև ոսկե աթոռ է դնում, ուտեստները մատուցում ոսկե սինիով (Ա/ԺԷ, 1-28), մի այլ հայրենում տղան խոստանում է արծաթե դռնակով ոսկե վանդակ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 263:

շինել, որ աղջիկն ազատ մտնի իր հոգու տունն ու ելնի (ԱԾ, 1-10):

Այս ոսկե ցուանքը տոնական տրամադրություն է, սիրահարների միջև արգելքների վերացում:

Երբեմն ոսկին հայրեններում ձեռք է բերում վարձք իմաստը, ինչպես «ոսկի նավ» կապակցության մեջ, երբեմն նշանակում է ընտիր, թանկագին, լավագույն.

*Որդի՛, հարըստի որդի,  
Ծիլ ոսկի, ծառ արմաւենի.  
Ա/ԽԹ, 55-56:*

\*\*\*

*Իմ սիրտս երկու դուռ ունի,  
Մէկ գաղտուկ, մէկըն ալանի.  
Գաղտ դռնովն ի դուրս ելայ,  
Լուկ գտայ կտոր մ'ալ ոսկի.  
Այս ոսկիս որ իմ յափս ընկաւ,  
Չէ ընկել ի ձեռն ոսկերչի.  
Ոչ ինքն ի քուրան մըտել,  
Ոչ առել ծայնն չաքուչի.  
Ա/ԽԴ, 119-126:*

Երկիմաստ նշանակություն ունի լույսը հայրեններում: Իբրև քրիստոնեական հավատի ըմբռնում՝ այն հոգու և մարմնի խորհրդանիշ է, իբրև գույն՝ մարմնավորվում է արևի ու լուսնի պատկերներով. լուսնի լույսը՝ իբրև սպիտակ գույն, արևի լույսը՝ փայլ, պայծառություն, տոն.

*Երեստ է լույսի նման,  
Բոլորեալ տեսդ՝ արեգական.  
Ոնց որ դու ելես քայես՝  
Արեգակերպ կու փայլես.  
Ա/Մ, 77-80:*

\*\*\*

*Ասես, թ'արեգակն ես դու՝  
Լոյս կու տաս յամէն ալամիս.  
Ա/Մ, 31-32:*

Յարն անվանվում է «Արեգակ, լոյս ու արև», (ԱԾԱ, 398): Հայրենի հեղինակը խոստովանում է, որ երկու յարուկ ունի, չգիտի՝ որին հավանի. մեկը լուսնի նման է, «Մէկն ունի զգունըն զարևուն» (ԱԶԱ, 94-100):

Կան հայրեններ, որոնցում արևն ընկալվում է իբրև ուրախություն. .

*Այսօր նոր արև ծագեց  
Աչերուս, որ զքեզ տեսայ.  
ԱՉԱ, 73-74:*

\*\*\*

*Չիմ եարն ձիսնէ զատեցին,  
Թոռմեցայ զէտ վարդի տերև.  
Տարին, այլ յերկիր հանին,  
Չի ցաթեց իմ սիրտը արև.  
ԱՄԱ, 379-382:*

Արևի լույսը շողշողացող, փայլփլող լույսն է, որ գարնան կայծակի պես փայլատակում է ամպերի միջից, դառնում անձրևի ու փայլի շաղվածք, այն լույսը, որի առաջ անգոր են անգամ երեցներն ու արեղաները (Ա/ԽԱ, 177-184):

Գերող է նաև լուսնի փայլը, բայց ոչ կուրացնող: Սա էլ արևի լույսի պես կենսաբեր է.

*Չծոցիկդ այլ ի յետ բանաս.  
Լուք հանես զմեռելն ի հողէն.  
ԱՄԸ, 26-27:*

Պատկերը, կարծում ենք, ծնվել է ժողովրդական հավատալիքից, ըստ որի՝ նորալուսինը առողջաբեր է, որպես լուսո աստվածություն՝ բուժել է մարդկանց<sup>1</sup>:

Գունային պատկերավոր մտածողության շքեղ օրինակ է հետևյալ հայրենը, ուր գույնը նախ արթնանում է ենթագիտակցությանդ մեջ, ապա բացվող օրվա լույսի հետ գծագրվում աչքերիդ առաջ.

*Քո ծոցդ առաւօտ նման,  
Քանի յետ բանամ՝ լուսանայ.  
Ա/ԽԶ, 109-110:*

Երբեմն փայլը, լույսը, արևի ու լուսնի գույները, աստղերի ցուլքերը նույնանում են իբրև գեղեցկության արտահայտիչներ.

*Տեսայ զիմ եարս նստած,  
Չէտ հազար լուսին բոլորած.  
Չէտ զարեգակն վառած,  
Չէտ պայծառ աստղն զարդարած.  
ԱՉԲ, 945-948:*

<sup>1</sup> Մանուկ Աբեղյան, Երկեր, Է, Երևան, 1975, էջ 45:

Կան հայրեններ, որոնցում արևն ու լուսինը նսեմանում են աստղի  
հետ համեմատվող աղջկա գեղեցկության առջև.

*Աղոտ՛ր, զքեզ Աստուած ստեղծել,  
Մարտ օրհնեալ, որ զքեզ բերել է.  
Ո՛չ լուսնկայ՝ ի քեզ նման,  
Ոչ արև, որ դեռ կու ծագէ.  
Հօհալ աստղ ի քեզ նման,  
Որ ամէն առաօտ կելնէ.  
Կերթայ ի Յոռումք ի վար,  
Լուսն ի մութն ի հօն բաժանէ.*

*ԱԽԱ, 81-88:*

Հայրենում շեշտը դրվում է աստղերի ոչ այնքան արտաքին գեղեց-  
կության, որքան գործառական առանձնահատկության վրա. նրանք  
լույսն ու մութն են բաժանում իրարից, բարի լույս են բերում, ինչպես  
Արուսյակ կոչվող լուսաբեր աստղը.

*Նման այն աստեղն ես դուն,  
Որ ամէն առաօտն ելնէ.  
Քիչ-քիչ նա ի վեր կու գայ,  
Հբարիլոյսն ի հետ կու բերէ.  
ԱՉԲ, 965-968:*

Այդպես հոգում ծնված սերն է դառնում բարի լույս, ընթացումբ, գե-  
ղեցկությամբ, մաքրությամբ պարուրում հոգին: Հայրեններում պատկե-  
րավորությունը հաճախ է խարսխվում իբրև համեմատության եզրեր  
հանդես եկեղ առարկաների քողարկված գունային հատկանիշների  
վրա.

*Այ իմ որոգայթ ու չար,  
Ուստի՝ եկի՝ ինձ հանդիպեցար.  
Աչերտ գէտ ժըրագ ի վառ  
՛Ի ընթվնուտ ժոթըն կա ժուհար.  
Առեալ մարգարիտ ու լալ  
Ու կարել զպոկիկ շողակալ.  
Ատով ես առել զիմ շունչ,  
Ու զհոգիս այ յիս չես ի տալ.  
ԱԽԱ, 9-16:*

Ճրագը, որ, ըստ ժողովրդական հավատալիքների, ունի նույն ազդե-  
ցությունը, ինչ արեգակի լույսը, թվարկվող թանկարժեք քարերից ճա-  
ռագող ցուլքերի հետ ստեղծում է փայլի գունային պատրանք՝ միտված

բացահայտելու աղջկա կատարյալ գեղեցկությունը: Ճրագի ու թանկագին քարերի հետ զուգահեռն ունի խոր արմատներ: Համոզված լինելով, որ արևը ցանկության դեպքում իրենց կարող է գեղեցկությամբ օժտել՝ հնում աղջիկները նրանից գեղեցկություն են խնդրել: Մանուկ Աբեղյանը վկայակոչում է «Աղբյուր»-ում (1883, N1) հրատարակված մի գրույց, որում արևամայրը վերջալույսին մի աղջկա պարգևում է գեղեցկություն և արևի ծառագայթներից հյուսած ու թանկագին քարերով զարդարված զգեստ<sup>1</sup>:

Հետաքրքիր է հայրենի սկիզբը՝ «Այ իմ որոգայթ ու չար»: Դիմելաձևում ակնհայտ է աղջկա կատարյալ գեղեցկության ու հմայքի առջև սեփական անզորության զգացողությունը:

Հայրեններում թանկագին քարերի մեջ առանձնանում է մարգարիտը: Սաղափային գույնը, փայլը հնարավորություն են տալիս մարգարիտը համեմատելու աղջկա ատամների (Ա/ԽԷ, 107-108) կամ երեսին շողացող քրտինքի հետ (Ա/ԻԲ, 7-8):

Սարգարիտը նաև մաքրության խորհրդանիշ է.

*Ի յաազանէն ծնայ՝*

*Հէտ զմարգարիտ ցոլայի.*

• *Մեծցայ ու մեղաւոր եղայ,*

*Յիմ ուտօքս ի մեղք գնացի.*

*ԱՉԲ, 335-338:*

Իբրև փայլ ու գույն են կերպավորվում արևը, լուսինը, թուխ ամպը, ծովն ու աստղերը հետևյալ հայրենում.

*Քանի ու քանի ասեմ.*

*Հիմ եարին կապան կարեցէք.*

*Արևն իւր երեսք արէք,*

*Հլուարնկան աստառ ձևեցէք.*

*Թուխ ամպն այլ բամբակ արէք*

*Ի ի ծովէն դերձան քաշեցէք.*

*Աստղերն այլ կոճակ արէք,*

*Հիս ի ներս ողկիկ շարեցէք.*

*ԱՄԿԷ, 61-68:*

Բնությունը դառնում է այն շռայլ ներկապնակը, որից օգտվում է հայրենի հեղինակը: Հայրենի կառույցը՝ իբրև պատկեր, շատ ավելի է շահում դրանից, քան եթե մատնանշվեր առարկայի կոնկրետ գույնը.

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 42:

որովհետև ընթերցողը հնարավորություն է ստանում իր երևակայությանը կարելու հագուստը, հագցնելու, զարդարելու աղջկան, օժեյու նրան զանազան բույրերով՝ իր սեփական հոգուց կայծ դնելով այդ ամենի մեջ: Այդպես տեսնում ու զգում են սերկևիլի (ԱԶԲ, 977), մուշկի (ԱԾԸ, 35-36), պայծառ ծաղիկների, կաթով շաղված ծոցիկի (ԱԶԲ, 1021), քրքումի (ԱԿ, 335), փնջիկ ռեհանի (ԱԻԶ, 1), նռան, նշի, լիմոնի (ԱԽԸ, 119-126) գույներն ու բույրերը: Տեսնում են ծիծեռնակի թևի հետ համեմատվող ունքերի գույնը (ԱԶԲ, 85-88), չար, մութ գիշերվա հետ համեմատվող վարսերի գույնը (ԱԽԷ, 102), ծովի (ԱԳ, 20) կամ չոր տերևների հետ համեմատվող աչքերի գույնը (ԱԵ, 10), անգամ այրող ավազի, տապի գույնը (ԱԿԷ, 49-51), որ կրակի գույնն է՝ իր հրե բոցով՝ իբրև սիրո զգացմունքի անզուսպ ուժի, անհաղթահարելի, մոլեգին, այրող ապրումների խորհրդանիշ:

*Քո սերն է կրակ նման*

*Կրակն երկաթ կու հալէ.*

*Իմ սիրտս է պատառ մի միս,*

*Կրակիտ ինչպէս դիմանայ.*

*ԱԽԵ, 37-40:*

Հենց սա է նաև Պարոյր Սևակին մղել հայրենները համեմատելու այրող, բոցկլտացող խարույկի հետ<sup>1</sup>, իսկ Լև Օզերովին՝ այն անվանելու «հրաշունչ պոեզիա»<sup>2</sup>:

Այսպիսով, հայրենների պատկերային համակարգում ծանրակշիռ դեր ունեն գունային պատկերները: Հեռու լինելով կրոնական իրողությունների խորհրդանիշ լինելուց՝ գույնը հայրեններում ձեռք է բերում փիլիսոփայական, գեղագիտական, հոգեբանական նշանակություն:

<sup>1</sup> Պարոյր Սևակ, հ. 5, էջ 33:

<sup>2</sup> «Նահապետ Քուչակի քանաստեղծական աշխարհը», Աշխատասիրությամբ՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի, Երևան, 2001, էջ 488: